


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 10 ՄԶԶ.
Պաշտոնաց : 2 Լիրա
Վեցամս. : Կ. Պոլսոյ : 5 ՄԶԶ.
Պաշտոնաց : 1 Լիրա
Օտար երկիրներու : 50 Ֆր.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուր. 5. աւելի անգամներու
համար դատ սակարկութիւն կըլ-
այ :
Խրատքանչիւր թիւ 40 փարա արծ :



ԼԵՍՏ

ՀԱՆԱՊԱՉՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու-
ած արքը խմբագրութեան վրայ է :
Լրագրաց փոխարեւորը : մաս-
կամ որ և իցէ գրութիւն խմբագր-
—Տնօրէնին պիտի ուղարկուի : Գրա-
թիւս Սանտրոքճըրար Հասարակութիւն
198, Նօթո խան : Մասիս գրութեան
եակի :
Հանրու ճանրը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չապուած նամակ, արքուած, և
ետ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 20 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Շարժում եղած Եւրոպական լը-
րագրաց էջերուն մէջ տակաւին մեծ
տեղ մը կը բռնեն Լուի Նաբոլէոն
կայսրորդէն մահուան վերաբերեալ
լուրերը : Լորտերուն խորհրդարանին
յուշին 23ի նստին մէջ, լորտ Պիքսոն-
ֆիլտ դուռաւորը և յարգանք մատուց
կայսրորդէն յիշատակին : Նոյն նըս-
տին մէջ Անգլիական զօրաց ընդհա-
նուր հրամանատար Բէնէդիկտի դուք-
սը նամակ մը կարդաց Բարեկուտոյ
հրամանգանի Անգլիական զօրաց հը-
րամանատար լորտ Չէրմֆորտի ուղ-
ղեալ : Այն նամակը Բէնէդիկտի դուք-
սը առած էր իւր յանձնարարական,
և կը ծանուցանէր թէ Լուի Նաբոլէոն
կայսրորդին փախաւ յայտնած էր
Անգլիական բանակին մէջ զինուոր
դրուելու, սակայն կառավարութիւնն
անկարելի համարած էր այս բաղ-
ձանքը գոհ ընել : Բէնէդիկտի դուք-
սը կը խնդրէր միայն որ լորտ Չէրմֆորտ
դիւրութիւն տայ երկուստեք կայս-
րորդէն զինուորական գործողու-
թիւններն աչքէ անցունելու : Բէնէդ-
իկտի դուքսն յարեալ թէ Անգլիական
պաշտօնատարը բնաւ բան մ'ըրած
չէին կայսրորդին այն դժուարին դը-
րից մէջ զնելու, ուր դժբաղդաբար
գտնուած էր : Իսկ լորտ Չէրմֆորտ
իւր մէկ հեռագրին մէջ կ'ըսէր թէ
ինք տեղեկութիւն չունէր իշխանին
յառաջապահաց արշաւանքի մը մէջ
գտնուելուն վրայ : Ուրեմն Լուի Նա-
բոլէոն ինքնին ուղած էր պատուայ
և վտանգի տեղը գտնուել : Եւրոպէ
կայսրութիւն դառն կսկիծի մէջ ըն-
կըղմաւ կը մնայ : Անգլիայ թաղու-
հին սգոյ դեմատով և իւր փոքր որ-
դին Լէոքոլա իշխանին և փոքր աղի-
կը Պէաթրիս իշխանուհին ի միասին
առած՝ Եւրոպէ կայսրութեան այցը-
լութիւն մը տուաւ և ժամու մը չափ
անոր քով կեցաւ : Կայսրորդէն կան-
խաջատ մահը մեծ չփութութիւն ձգեց
Պոնաբարթեանց մէջ, որը իրենց յոյ-
սերուն մեծաւ մասամբ յօդս ցնդի-
լը կը տեսնեն : այսու ամենայնիւ յոյ-
տարարութիւն մը հրատարակելով կը
ծանուցանեն թէ իրենց կուսակցու-
թիւնը չպիտի ցրուի, այլ միացեալ
պիտի մնայ, և թէ կայսրութիւնը պի-
տի վերադառնալ : Բայց ասոնք ու-
նայն խօսքեր են միայն, և այժմէն ի-
րենց մէջ պառակտումը մեծցած է :
Ժեռոմ Նաբոլէոն իշխանը նամակ մը
հրատարակեց, որոյ մէջ կըսէ թէ
Հանրապետութիւնն այս վայրկեան
արգահանգ կուլ մը կընէ, որ արդի
ոգւոյն կուլն է անցելոյն սղւոյն
դէմ, և թէ ինք չկրնար դուրս լինիլ

կուսակցութեան մը, որ արդի կա-
ռավարութեան դէմ կը կուլի յո-
գուտ կղերականութեան : Ասկէ կըր-
նայ հետեւի որ Լուի Նաբոլէոն իշ-
խանին մահը մեծ հարուած մ'է Պո-
նաբարթեանց, և թէ այս մահն որչափ
և ցաւակցութեան արժանի լինի,
չկրնար երբեք այնչափ աղետ պատ-
ճառել, որչափ պիտի ծագէր՝ եթէ
օր մը յաղթանակաւ Գաղղիա վերա-
դառնար :

Եւրոպական խնդիրը առհնա-
պալից ժամն անցուց, և հանգար-
տութեան չըջանի մէջ մտաւ : Նոր
խտիմը հանդիսաւոր կերպիւ պաշ-
տօնի անցաւ, և հին խտիմը Եւրոպ-
տոսէն մեկնեցաւ : Փարսաւորներուն
երկիրը դարձեալ տէր մը փոխեց,
բայց Եւրոպական գործերն ինչպէս
պիտի վախճան առնուն, և այնչափ
դիւրուած պարտքերն ինչպէս պիտի
վճարուին : Գաղղիոյ և Անգլիոյ կա-
ռավարութեանց կողմէն կարգեալ
երկու պաշտօնատարը, Պ. Պ. Յո-
պէր և Կոչէն 1876ին Եւրոպական
պարագը միացուցած և երբեք
պարագը վերջացուցած էին : Բայց ան-
կէ մինչև հիմայ ութ միլիոն ու կէս
Անգլիական ոսկիի երբեք պարտք
եղեր է դարձեալ, Գանայեան կա-
րասն իսկ ասոր հետ բաղդատմամբ
ոչինչ է, քանզի անոր մէջ ջուր կը
լցուէր միշտ և պարագ կը մնար, իսկ
Եւրոպական դանձը միշտ ոսկի կը
լցուէր և պարագ էր : Արդեօք հի-
մայ պիտի լցուի :—այս մասին ներելի
է թերահաւատիլ անցեալը մեր աչ-
քին առջև ունենալով : Միայն թէ
կրնայ յուսացուիլ որ երկուստեք
թէվիքը փաշան տեղութեանց խոր-
հրդին անսպու աւելի յօժարա-
վայթ գտնուի : Գժեպողաբար, տե-
լութիւնները շատ անգամ իրենց հը-
պատակ բաղդատնիքներու շահերը
կը պաշտպանեն, և այս պատճառաւ
Եւրոպայի խտիմը կրնայ անոնց շա-
հասիրութեան առաքիլ լինիլ դարձ-
եալ : Իսմայիլ փաշային անկման վրայ
գուցէ տեղութիւններէն ոմանք
դարձեալ Եւրոպական գործոց մէջ
ուղղակի մաս ունենալու աշխատին :
Արդէն Լոնտոնի մէջ կ'ըսուէր թէ
Պ. Վիլլարտ Եւրոպայի պիտի վերադա-
նայ : Բայց ինչ որ ալ լինի, Անգլիա
և Գաղղիա յաղթահարեալ չպիտի
լինին, և իսմայիլ փաշան պաշտօնանկ
ընէրէ ետեւ թերեւս յաջողին նաեւ
Եւրոպական նախարարութեան մէջ
նորէն էր լուրացի անդամներ դնելու :
Կ'ըսուի նաեւ թէ մայրաքաղաքիս
Անգլիական և Գաղղիական դեսպան-
ներն հրահանգ ստացած են, որ Բ.
Դրան Եւրոպայի խտիմին արուած
վերջին ֆէրմանը ջնջելուն և Մէհմետ
Ալիի արուած ֆէրմանը միայն վերա-
հաստատուելու հաւանութիւն չտան :

Եւրոպական խնդիրը կրնայ ուրեմն
բոլորովին վերջացած չը համարուի,
թէ և դժուարութեան մեծ մասն
անցած է :

Մայրաքաղաքիս գաղղիական Մա-
թէն լրագրին, որ դադարեալ Սթամ-
պուլ լրագրին տեղ կը հրատարակուի,
Հայաստանի բարենորոգմանց նկատ-
մամբ Լորտ Բարնարդին ըրած հարց-
ման 'ի պատասխան Լորտ Սալիսպը-
րի ծանուցեալ յայտարարութեանց
վրայ իւր երէկուան թուով կարեւոր
յօդուած մը կը հրատարակէ, զոր
ամեն Հայու ուշադրութեան ու գո-
հութեան արժանի կը համարուի :

“Անգլիական նախարարութիւնը,
կըսէ Մաթէն, յարձակում կը կրէ
այս միջոցիս հետզհետէ մեծցող ընդ-
դիմադիր կուսակցութեան 'այնպի-
սի յամառութեամբ մը, որ ծանր
երկիւղ պէտք է ազդէ յիշեալ նա-
խարարութեան 'նոյն իսկ իւր գոյու-
թեան համար :

Մնաց որ հասարակութեան մէջ
այլ ևս չյուսացուի որ Լորտ Պիքսոն-
ֆիլտ ներկայ խորհրդարանին փակ-
ւելէն ետեւ կանգուն մնայ, և կ'ապաս-
ւի որ նոր ժողովոյ բացուած ժամա-
նակ Լորտ Պիքսոնֆիլտ անպատճառ
լինայ :

Այս է ընդհանուր կարծիքը :
Բայց ասկից զատ շատեր կը խոր-
հին իսկ թէ նոր ձախողութիւն կամ
քաղաքական նոր սխալ մը պատահած
ժամանակ խորհրդարանը կրնայ լուծ-
ուիլ, որոյ հետեւանք կը լինի Լորտ
Պիքսոնֆիլտի և իւր պաշտօնակցաց
շատերուն անմիջական անկումն :

Հաւանական է որ Անգլիական
նախարարը իրենց արդեւորութեան և
հետեւաբար իրենց զրկեալութեան
վրայ պատիւ կարծիքներ ունենան,
ինչպէս որ միշտ կը պատահի ոյս-
պիտի պարագայի մէջ : Բայց դժ-
ւարին է չմտածել թէ նոյն իսկ այդ-
նախարարը այսուհետեւ չպիտի կրնան
ինքզինքնին խուսափու պատասխան
ներով, սովորական եղած խօսքերով
և անհաշակ զուարճաբանութիւննե-
րով պաշտպանել, ինչպէս որ տեսնը-
ւեցաւ վերջին վիճաբանութեան մէջ :

Նախարարութիւնն ընդդիմադիր
կուսակցութեան հաղթութեան յետ-
ւելով, բնականաբար պիտի ջանայ
կարելի եղածին չափ վրայէն նետել
այն ծանր պատասխանատուութիւն-
ները զորս յանձն առած է՝ մանա-
ւանդ Ասիական թուրքիոյ նկատ-
մամբ : Եւ ճշդիւ այս կողմէն է որ
երկու ժողովոյ մէջ այժմ կը հարուա-
ծի արդատականաց կողմանէ, որը մին-
չև ցարք իրենց վրէնք իրենց բուռն
հակառակորդ չէին ցոյց տուած :
Յայտնի է թէ Կիպրոսի մէջ Յոյնք
հանայնց դէմ 'ի գործ դրուած ող-
բալի բռնութիւնը նոր դէնք մը ար-

ւաւ ընդդիմադիր կուսակցութեան
և թէ օտար երկիրներու մէջ Անգ-
լիոյ ներկայի ինքեւր համար կա-
ռավարութեան ընտրած գործակա-
տարները Ուիկեթուն (Անտառականե-
րուն) կողմանէ խիստ հակոգութեան
մ'առաքիլ պիտի լինին : Ասոնք յիշ-
եալ գործակատարաց ընթացից մէջ
պարտականաց կամ դոնէ քննադա-
տութեան նիւթ լինելիւ բաներ պի-
տի փնտռեն, և լաւագոյն կը լինի որ
այդ հակոգութիւնը նոյն իսկ նախա-
րարութեան կողմանէ 'ի գործ դըր-
ուի : Թերեւս մինչև հիմա տեսնուա-
ծէն աւելի մեծ խնամով 'ի գործ դըր-
ուի այդ հակոգութիւնը : Բայց մա-
նաւանդ պէտք է սպասել որ Անգ-
լիոյ նախարարութիւնն այսուհետեւ
առաջուան չափ ներողամտութեամբ
չվարուի Օսմանեան վարչութեան նը-
կատմամբ :

Արդէն Լորտ Սալիսպըրի, խիստ
նեղուելով Լորտ Բարնարդինէն, ինք
զինք պաշտպանելու համար բոլոր
պատասխանատուութիւնը վրայէն նե-
տեց Հայաստանի դէպքին նը-
կատմամբ, և կ'երեւի թէ Օսմանեան
վարչութիւնն ամբաստանելէ ալ ետ
չկեցաւ : Ճշմարիտ է որ աւելցուց ը-
սելով, “Եթէ որ և է բարեբաւման
հընարին էր առանց բարենորոգմանց,
բարենորոգումներն ալ անկարելի էին
առանց դրամի : ”

Երկար ժամանակէ 'ի վեր սովորա-
կան եղած խօսքերու կրկնութիւն մի-
այն կը լսեմք միշտ, և ցաւալի է որ
նախարարութիւնն ալ իւր վրայ եղած
յարձակմանց դիմադրելու համար
այդպիսի խօսքեր միայն կը գործածէ :

Ոչ ոք կը պնդէ թէ անկութեան
արդի դրամական կարողութեամբ կա-
տարեալ բարենորոգումներ կրնան 'ի
գործ դրուիլ, բայց մինչև ցարք չե-
ղան շատ մը բաներ, որը կրնային գոր-
ծադրել սխալելու համար այն տարա-
բաղդ ժողովուրդներն, որոյ վրայ
Անգլիա 'այսինքն բոլոր ընդդիմա-
դիր մասը վերջապէս զբաղեւորե-
ւայթ ունի այսօր :

Տարիէն քիչ մ'աւելի ժամանակ
անցած է Անգլո-թուրքական պայմա-
նադրութեան կնքումէն 'ի վեր, որով
Անգլիական կառավարութիւնն Ասիոյ
մէջ բարենորոգմանց գործադրու-
թեան համար թուրքիոյ օգնել կը
խոստանար, տարւոյ մը ժողովանակ
անցած է Պէրլինի դաշնադրութեան
ստորագրութեան 'ի վեր, որոյ 61
յօդուածը բացորոշապէս Հայոց վի-
ճակին բարեբաւմ կը խոստանայ :

Կը թուի ուրեմն որ ընդհանուր
զանցառութիւն կայ այդ դժբաղդնե-
րուն վիճակին նկատմամբ : Բայց ե-
թէ Պէրլինի դաշնադրութիւնն ստա-
րագրուի բոլոր տեղութիւնք այդ ժո-
ղովրդոց վիճակովը պէտք էր դրա-
ղէն, որը Եւրոպայէն հեռի դըր-

նուեւելով հանգեւրձ ոչ նուազ կարեւել
ցուծեան արժանի են , անշուշտ ա-
մեն կառավարութիւնը այս մասին
միեւնոյն աստիճանաւ կապուած էին
Գերմանիա , Աւստրիա և խա-
լիս մեծ իրաւունք ունին ըսելու
թէ Յարգ յօդուածն ընդունելով և
մինչև իսկ անոր արձանագրուելը
պահանջելով, անոր ներկայած բարո-
յական պաշտպանութիւնն աւելի
պարտականութիւն մը յանձն առած
էն :

Դադրիս՝ թէ և իրաւունք ունի
կատարելապէս ձեռնարկ լինելու ,
կրնայ սակայն հաստատել թէ Հայոց
տառապանքն անորմէն համար ա-
մեն կարելի եղածն ըրաւ գոնէ Կ-
Պորոյ մէջ : Անգղիական կառավարու-
թիւնն ալ կրնայ նոյնը ըսել :

Աւագ ոչ , Մինչև իսկ Կ-Պորոյ
մէջ դէժ բարոյապէս իւր պարտքն ե-
ղած օգնութիւնը չտուաւ Հայոց , և
յաւալի ակնառութեամբ՝ թէ՛ իւր
պաշտպանելու ուղածներուն և թէ՛
միտնալ ուղածներուն հաւասարա-
պէս գէշ ծառայութիւն մ'ըրաւ :

Բ. Դուռն իւր արուր գիւտնա-
պետութեան փաստակար ազդեցու-
թիւնը միշտ կրելով , չարեայ առաջ-
քը չառաւ : Չուառական վառա-
սէրներու թելադրութեանց ակննջ
գրաւ , որք տէրութեան ձեռքը մը
նայած ամենագեղեցիկ դաւառաց
մէկ քանիին աւերման վրայ իրենց
բաղդը կանգնել կողմէին : Հաւա-
տալ թուեցաւ թէ ապստամբու-
թիւն կար հան , ու քանի մը ցոյցեր
միայն եղած էին՝ խել մ'անուր հա-
լըստահարութիւններէ գրգռեալ :

Յանձնաժողովներ զրկեց , որք
խնդրոյն լաւ տեղեկութիւն ունեցող
բոլոր անձանց կարծեաց համեմատ՝
հոս հարկ եղած հրահանգները բնաւ
չէին ստացած , յանձնաժողովներ ,
որք բաւականապէս անկախ անձերէ
բաղկացած էին թուիր :

Ձէյթուն ամենէն աւելի ստիպու-
ղական վտանգ ներկայաց կէտն էր ,
որ հետեւապէս ամենէն աւելի արտգ-
դահայում կը պահանջէր :

Իրիւն արտգաղթելով միջոց , ուրիշ
բան չկրնար ցոյց տրուիլ բայց եթէ
զօրանցի մը շինութիւնն , և մեր
գիտցած և ոչ մէկ երկրի մէջ զօրա-
նոցի մը շինութիւնը ժողովրդեան հա-
մար բարւոքում՝ կամ բարւոքման
յոյս մը չներկայեր . այլ սովորաբար
հակառակը կը ներկայէ :

Ձէյթունի մէջ շինուած զօրանու-
ցը՝ երկիրն աւազակաց և չարագոր-
ծաց գէժ պաշտպանելու սահմանաւ
նոր ոստիկանութեան (ժանտարմա)
մը յատկացած է արդեօք :

Բայց այդ նոր ոստիկանութիւնը
կազմելու համար , որուն նոյն իսկ Կ-
Պորոյ մէջ այնչափ մեծ պէտք ունիմք ,
գրամ՝ չկայ : Ձէյթունի դաւառին
բնակչաց կրած ներդրութիւնը սովորա-
կան աւազակներէ չէ , փիւրղերն և
Ձէրքէններն են որ զանոնք կը կու-
ղպտեն , կ'ապանեն , անոնց կա-
նայքն ու այլլիւնքը կը բռնաբա-
րեն . և բոլոր այս չարագործներէն
զանոնք ազատելու համար , չէ թէ
այժմ հոն հաստատուելիք ոստիկա-
նութեան պէս ոստիկանութիւն մը ,
այլ կանոնաւոր զօրք պէտք է , որք
միանգամ չարագործաց վրայ երթա-
լով և քանի մը խառութեան օրինակ-
ներ տալով , կատարեալ անգործութիւն
կրնան հաստատել ներկային մէջ և
մինչև իսկ ապագային համար , եթէ
վերջապէս մինչև հիմա արուածնե-
րէն աւելի խղճամիտ պաշտօնատար-
ներ արուին այդ գաւառին :

Այս վերջին օրերս Հայ լրագր-
մը Ձէյթունի մէջ ձեռք առնուելիք
միջոցներուն վրայ քանի մը տեղե-

կութիւններ տուաւ , բայց մեզ այն-
պէս կը թափ որ յիշեալ լրագրին
տեղեկութիւններն՝ եթէ ճիշդ ալ չի-
նին , սակայն շատ մութ կէտեր կան
անոնց մէջ :

Հայոց եղիակոպտն առաջարկեր
է որ Հայ օգնական մը արուի Գ-Պ-
մագումին : Բայց դեռ որոշում մ'ե-
ղած չէ այս մասին : Բնակիչք Քօմի-
սէրներուն ուղերձներ տուել են , որ
17 տարեէ ի վեր պաշտօնատարաց ,
Ձէրքէնաց և Քիւրդաց երեսն իրենց
կրած չարքները կը պատմեն :

Բայց այդ փիւրղերուն , Ձէրքէն-
ներուն և պաշտօնատարաց մէջէն
արդեօք մէկը պատժուեցա՞ւ : Ահա
այս կարեւոր էր գիտնալ :

Ճշմարիտ իրողութիւնն այս է որ
հասկցուած է թէ հին տուրքը ժու-
ղովրդեան կարողութեան շատ բար-
ձրը լինելով՝ չէր կրնար հաւաքուիլ :

Իսկ այն պաշտօնատարք , որք
յայտնեցին թէ այդ տուրքը կրնար
տակալին աւելնալ , և վճարելու ան-
կարող դժբաղդները բանտարկել տը-
ւին , և որոց շնորհիւ իսկ մ'անձեր
բանտարկու մէջ մեռան , այդ պա-
շտօնատարք չլիտի պատժուին :

Եթէ վերոյիշեալ լրագրին տեղե-
կութեանց նայիմք , յանձնախումբը
լաւ ճամբու մը մէջ մտած է : Աս-
տուած տայ որ այսպէս լինի . բայց
որպէս զի իւր պաշտօնն իրական ար-
դիւնք մ'ունենայ , պէտք է որ պա-
տիճները խիստ լինին և դժբացմունք
արագապէս չնորհուին :

Այսօրուան օրս ամենամեծ սը-
խալ մ'է չհասնալ թէ Արեւելեան վը-
շտ խնդրոյն մէջ ամեն բան իրարու
հետ կապակցութիւն ունի : Ծագած
բոլոր կամ գրեթէ բոլոր պահան-
ջութիւնները դանդաղանքը կամ բու-
ղիւնները չլիտի մ'օգտակներուն պէս
իրարու կապուած են :

Լորտ Սալիսպըրի՝ յօդուածիս
սկիզբը յիշուած բանախօսութեանը
մէջ ըսաւ թէ բարենորոգմունք դը-
րամի կարօտ են , բայց աւելցուց թէ
գրամը յայտնում միայն կրնայ զը-
նուել իրար խաղաղութիւնն ապա-
հովի :

Ահա այս վերջին խորհրդածու-
թիւնն է որ աւելի ճշմարիտ է , և Ա-
սիոյ մէջ անցած իրողութիւնները
տեսնելով , կառավարութիւնը պէտք
է փութով վերջացնէ Հիւլիսական
խնդիրը :

Թուրքիա իւր վրկութեան հա-
մար՝ պէտք է որ իւր գրացիներն
իրեն բարեկամընէ , և տակաւին իւր
ձեռքը մնացած հպատակներն ալ ի-
րեն անձնուէր զաւակներ ընէ :

ՀՆՈՒԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 1 յուլիս .
Լորտ Սալիսպըրի , յունիս 12 թուով
Սըր Հ. Լէյթօնի ուղղած մէկ հեռագրին
մէջ Հիւլիսական սահմանաց ուղղութեան
հարկը կը ճանաչէ . սակայն կը պնդէ որ
այս ուղղութիւնը կարելի եղածին չափ
յօդուած Թուրքիոյ լինի : Նոր որ Սուլթա-
նը երաշխաւորութիւններ պահանջէ ա-
պագային մէջ Յունաստանի բարեկամա-
կան ընթացիք համար , Անգղիա և Գաղ-
լիա նպատաւոր կերպիւ պիտի ընդունին
այս խնդիրն և այս նկատմամբ ընելիք
ձեռնարկութեանց համար Դրան առա-
ջարկութիւնները նկատողութեան պիտի
առնուն :

Լոնտոն 1 յուլիս .

Օտմ. Բօնո .	11 43/46
Փոլս .	4865 45 1/4
»	4869 44 1/2
»	4871 55 1/2
»	4872 24 1/2
»	4873 43 1/2
»	4874 74 5/8
Անգլ. Բօնո .	97 11/16
Փարիզ 1 յուլիս .	12, 7 1/2
Օտմ. Բօնո .	

Գաղլ. Բօնո .	50/0	81,90
»	»	84,10
»	»	115,95

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բ. Դուռն ներքին գործոց նա-
խարարին նախագահութեան ներքե
յանձնախումբ մը կազմեց նոր ոստի-
կանութեան (ժանտարմա) կանոնադ-
րութիւնը քննելու համար :

Վերջին կարգադրութեանց հա-
մեմատ՝ Պուլլարիոյ իշխանը քանի
մ'օրէն Կ-Պօլիս պիտի գայ . բայց
քաղաքին մէջ չնստելով , միայն կայ-
սերական պալատը պիտի երթայ և
վեհ . Սուլթանին ներկայանալէ և
ժամու մը չափ կենալէ ետեւ՝ պիտի
մեկնի մայրաքաղաքէս :

Բ. Դուռն Նոյի-Պաղարի գրաւ-
ման նկատմամբ Աւստրիական պատ-
ւիրակաց հետ բանակցելու համար
զինուորական յանձնախումբ մ'ան-
ւանեց :

Երէկ Պայազլիտի հրապարակին
վրայ 25 միլիոն դրուշի թղթադրամ
այրեցաւ :

Լէվանթ Հէրալտ լրագիրն երէկ-
ւան թուով Տիարպէքիքէն իրեն ուղ-
ղեալ հեռագիր մը կը հրատարակէ
ժանուցանող թէ կայսերական Քօմի-
սէր Ապէտին պէյ՝ ազդեցութեան
տէր և ահարկու երեք Բուրդ-պէ-
յերն յանախնկալ բանտարկելով ընդ-
հանուր դահուլթիւն պատճառեր է .
Օսմանեան կառավարութեան Ա. Բօ-
միսէրին ցոյց տուած ազդու և կրտ-
սուկ ընթացքը լաւ տպաւորութիւն
յառաջ բերեր է հասարակաց կարծ-
եաց վրայ :

Քար-բերդէն յունիս 10 թուով
մայրաքաղաքիս Լէվանթ Հէրալտ
լրագրոյն ուղղեալ նամակ մը , Տիար-
պէքիքի և Քարբերդի դաւառաց
կայսերական Քօմիսէրներուն գործու-
ղութեանցը վրայ տեղեկութիւններ
կուտայ : Քօմիսէրք Տիարպէքիք եր-
թալէ առաջ Քար-բերդի մէջ երեք
օր կեցեր և բաւական գործ տեսեր
են : Բաղմամիւ աղերսագիրք ներ-
կայացուեր են իրենց , Քօմիսէրք բո-
լոր լուծելի խնդիրները կարգադրելու
և մնացածներէն ետեւ ալ փութով
կարգադրութեանը համար ազդու
հրամաններ տուել են : Ծահերն հա-
կառակ լինելով , բնականաբար Քօ-
միսէրք չեն կրցեր զանմէնք գոհ ը-
նել . և իրաւունքն ակնեքե եղած
խնդրոց մէջ իսկ , անոնք՝ որոց հա-
կառակ վճիռ տուած են Քօմիսէրք ,
ամենէն աւելի դժգոհած են , որով
դժգոհներու կուսակցութեան մը կաղ-
մութիւնը շատ հաւանական է : Լէ-
վանթ Հէրալտի թղթակցը կը թէ թէ
իրենց յայտերն ի դեռ եղած փառա-
սէրք և իրաց արդի վիճակին անփո-
փոխ մնալուն մէջ չահ ունեցողք՝ ան-
շուշտ պիտի միանան այդ կուսակ-
ցութեան հետ . բայց կը յուսայ որ
Քօմիսէրք պիտի յաջողին ամեն դժ-
ւարութեանց յաղթել :

Երկուշաբթի իրեկուն ժամը 11ին
միջոցները Սուլթան Պայազլիտէն սը-
րարչաւ անցնող կառք մը զինուոր մը
ջակնախեց , որ անմիջապէս մեռաւ :
Կառապանը բռնուեցաւ :

Երբեք թիւ-թայրիէի ընկերութեան
վիճակը քննելու պաշտօն ունեցող
յանձնախումբին տեղեկագրութեան
մէկ պատճէնը մեր ձեռքն անցած լի-
նելով՝ վաղը պիտի հրատարակեմք՝
հանգեւրձ մեր գիտողութեամբ :

Գուղկունճուգի կոխն , որոյ վը-

րայ մեր երկուշաբթի առուր թուով
համաձայն տեղեկութիւն մը հրատա-
րակած էինք , բաւական ծանր եղած է :

Անցեալ շաբթու յիշեալ թաղին
Հրեայ և Յոյն բնակիչներէն ոմանց
մէջ վեճ մը ծագած լինելով , Հրեայք
Յոյներուն հարուած մը տալու հա-
մար մեծ պատրաստութիւններ տե-
սած , իրենց տուները քարերով և
մահակներով լցուցած , և շրջակայ
գիւղերէն և մինչև իսկ Պայազլէն
իրենց ազգակիցներն օգնութեան
կանչած էին , Կիրակի օրն իրեկուն
դէմ գինով Հայ մ'ալ ու ձախ տա-
լու բերելով փողոցէն անցած ժամա-
նակ , Հրեայ մը հարուած մը կու-
տայ և առուի մը մէջ կը գլորէ
զայն . քանի մը Յոյնք զայս տեսնե-
լով կը միջամտեն և ասկէ կուի կը
ծագի , բայց ոստիկանք միջամտելով
կը դադարեցնեն , Հրեայք իրենց դի-
տաւորութեան գործադրութիւնը գի-
շերուան կը թողուն , և ժամը կէսին
քարերով ու մահակներով Յունաց
թաղին վրայ կը յարձակին : Յոյնք դի-
մադրել կ'սկսին և անմիջապէս կը-
ռուի կընդհանրանայ : Գուղկուն-
ճուգի ոստիկանութիւնը չկրնարով
արդեւուլ , իւսկիւտարէն օգնութիւն
կը խնդրէ , բայց մինչև որ կը հաս-
նին , կուի բաւական ծանր հետե-
ւանքներ կունենայ : Հրէից առած
հարուածներէն բաղմամիւ անձինք
վիրաւորուած են , որոց մէկ քանին՝
ինչպէս նաև ոստիկանութեան յիւս-
նապետ մը մեռել են կըսուի : Խաղա-
ղութիւնը կէս գիշերին մօտ միայն
կրցաւ հաստատուիլ , 40ի չափ իրուո-
վարաք ձերբակալուեցան , կառա-
վարութիւնը Գուղկունճուգի Հայոց
Յունաց և Հրէից երեւելիներէն յանձ-
նաժողով մը կազմելով՝ քննութեան
ձեռնարկած է :

Կ. Պորոյ քաղաքապետութեան
մէկ ազդը կը ծանուցանէ թէ պղինձ
գրամին արժէքը նորէն կտարելուն
վրայ՝ հայցին գինը 100 վարայէն 105
վարայի հանուած է :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՈՒԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

Երէկ իրեկուն գոցուեցաւ	12,33
Այս առաւօտ բացուեցաւ	12,33
Կէս օրին	12,32
Բուձլի երկաթուղի	Քր. 47,
Թղթագրամ	Վր. 1310

ԸՆԹԱՑԻ ԴՐԱՄՈՑ

20 Յունիս

Անգլ. Բօնո	արշ.	409 46
Նարոյնի սոկի	»	87 30
Իսթանբուլ Բօնո	»	89 39
Դըրբի	»	51 45
Մէհմեդի տարեկանութիւն	»	6 40
Հիւլիս	»	14
Մէթալիք	»	45
Պղինձ	»	183 20

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Հ. Ր. Ա. Ե. Բ.

ԱՌԱՋԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՍ

Աղգային ժողովը նիստ ունի յա-
ռաժկայ ուրաթ յունիս 22 ի Ղալա-
թիս :

Ատենան պիտի բացուի ճիշդ ժա-
մը 6 ին և գոյուի 10 ին :

Հրաւիրեալ են երեսփոխան Էֆեն-
տիներն՝ իրենց ազգասիրական պար-
տականութիւնը կատարելու փութալ :

1879 յունիս 11

Պարբերն Հայոց Պատրիարքական
Գումգաթու

Փոխտարդ-
ՄԱՅՐԱՆՈՍ ԵՊԻՍԿ.

ԻԶՄԻՐԼԵԱՆ

Օ Ր Ա Կ Ք Ր Գ

1. Ընտրութիւն Երեսփոխան յանձ-
նախումբին Աղդ. ժողովոյ .

2. Վիճարանութիւն Պիւտճէի 79-80
տիւ (չարունակութիւն) .

